

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համար 8 ՄԷԸ
Վաւաւաց 10 ՄԷԸ
Վաւաւաց Կ. Պոլսոյ 4 ՄԷԸ
Վաւաւաց 3 ՄԷԸ
Իւրաքանչիւր թերթի գին 60 փոյ
Քանութեան առաջ մէկ անգամի հա-
ճար 3 դուրուշ, երկու անգամի հա-
ճար 2 դուրուշ, աւելի անգամներու
համար զատ աւելարկութիւն կը լայն:



Լ Ր Ա Գ Ի Ր

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 3 ԴԵՍԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Պէրլին 11 դեկտ.

Երեւոյի անկախ ժողովը 139 ի
դէմ 141 ձայնով ընդունեց յանձնա-
ժողովոյ առաջարկութիւնը, որ իրու-
սիոյ և Սաքսոնիոյի զօրաբանակաց
ծախքը միացնել կուզէր՝ հակառակ
Պիտեր. Իլլիանին ընդդիմութեան,
որ յայտարարեց թէ առաջարկու-
թիւնը բացորոշապէս և նիւթապէս
անհնարին է:

Այսօր դատաստանական ատենին
մէջ Արեւիկ կոմսին փաստաբան Պ.
Տօրֆօրմ պնդեց թէ փոքրիկ դեռ-
պանատան քարաուղոր Պարսն Զօլ-
թէյն խտտութիւններ է Արեւիկ կոմ-
սին թէ իրեն պատուէր եղած էր
հակառակութիւն ընել կոմսին վրայ և
տեղեկագրել ի Պէրլին: Անմիջապէս
հեռագիր զարկուեցաւ Պարսն Զօլ-
թէյնի որ Պէրլին գայ և տառապի
ներկայանայ: Արեւիկ կոմսը կրտս-
թէ չկրնար ամենափոքր անհոգու-
թիւն մը մեղադրել զեպանատան
պաշտօնէից վրայ, և կորուսեալ
թղթոց վերաբերեալ բոլոր պատաս-
խանատուութիւնն իր վրայ կուսնու:
Կը խտտութիւն թէ Պէրլին լրագրաց
մէջ հրատարակեալ յօդուածոց ու-
մանց հեղինակն ինքն է, բայց Վի-
էնայի լրագրաց մէջ եղած հրատա-
րակութեանց վրայ չուզեր խտտու-
թիւնութիւն ընել:

Ատենին յետոյ Պ. Պիլլըրի,
Լանտպէրիկի և այլոց վկայութիւն-
ները բնեց, որք նպատաւոր են
Արեւիկ կոմսին:

Փարիզ 11 դեկտ.

Դադլիոյ Պանքան որոշեց 20
ֆրանքնոց պանքատմաներէն մնաց-
եալ 336 միլիոնն ոսկով վճարել:
Այս անօրէնութիւնը պանքատման-
ընէն բռնի ընթացից ջնջման հա-
նելու միջոց մը կը նկատուի:

Մարտի 11 դեկտ.

Օտերանո մարաշխան հիւսիսա-
յին գաւառներն իրթալով Լադէրնու
և Մօրիօնիս զօրավարաց հետ խոր-
հուրդ կրնէ միահաղոյն յարձակու-
մ' ընելու Բալքանեանց դէմ:

Կը հաւատան թէ Լամա զօրա-
պետն յաղթուեր է Բարբուսանե-
րէն և ինքն ալ վերաբերուեր է:

Վիէննա 12 դեկտ.

Պէրլինէն եկած լրագրութեան
և որ յայտարարեալ լինէն Արեւիկ
կոմսին յարաբերութեանց վրայ, և
ընդհանրապէս մեղադրելով զայն
իրաւունք կուտան Պիտեր. Իլլի-
անին բռնած ընթացից:

Պէրլին 12 դեկտ.

Արեւիկ կոմսին դատաստանին մէջ

վկայից անկողութիւնը կը շարու-
նակէ: Քանի մը լրագրապետք երես
առ երես բերուեցան Արեւիկ կոմսին
հետ:

Ատենին նախագահը կշտամբեց
Արեւիկ կոմսին ազդականներն՝ ամ-
բաստանելոյն դատին մէջ դարձն
մասնակցութիւն մ'ընելուն համար:
Յետոյ դռնփակ նիստ ընել որոշուե-
ցաւ Հռոմի Եպիսկոպոսին և ընդհանրա-
կան ժողովին վերաբերեալ գրու-
թիւնները ըննելու համար:

Մէքսանդրիա 11 դեկտ.

Տարփուրի ժողովուրդն եղիպտո-
սի հետ միացումն ընդունեց, բայց
հակառակ դոմանք թշնամական դոր-
ժեր ընելով կը հալածուին խտրվի
զօրքերէն:

Լոնտրա 12 դեկտ.

Պոմ. Բօնա. 44 3/8
Բոն. 1865 68
» 1869 54
» 1874 63
» 1872 84 1/2
» 1873 54 1/4
Նոր փոխառութիւն 1
Անգլ. Բօնա. 92 1/8

Լիվերքուլ 12 դեկտ.

Բանդակ Միտլինկ—Օրէն 7 3/4—78
» Յայր Տօլէրաճ 3—
Ծախում 8000 հակ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ՝

Մանսթրիքի կուսակալ և Կայսե-
րական երրորդ զօրաբանակին հը-
րամատար Ալի Սայիտ փաշան զին-
ւորական նախարարութեան տեղա-
կալ (գայմագամ) անուանեցաւ փո-
խանակ Ապուլ Բէրիմ փաշային:

Տարի Շուրայի նախագահ Մէհ-
մետ Բէֆէթ փաշան Մանսթրիքի
կուսակալ և երրորդ զօրաբանակին
հրամատար անուանեցաւ:

Ֆէրիք Ալի փաշան Տարի Շուրայի
նախագահ անուանեցաւ:

Օսման Նուրի Էֆէնտին Մալա-
թիայի կուսակալի անուանեցաւ:

Քէրպէլայի աւստամանակայ կա-
ռավարից Պէհմէթ պէյ Սալայի կա-
ռավարից անուանեցաւ:

Դարձեալ կայսերական հրամանաւ՝
Բարձր. Շէյխ իւլ Խալմ Էֆէնտին
որդի էլ Սէյիտ Ալի Հայտար Էֆէն-
տին Անատոլիոյ Դաւաթէր անուա-
նեցաւ:

Անցեալ շաբթու Այսթէֆանօզ
Պ. Վ. . . ի տունը ծառայութեան
մտած նոր աղատակի մը տունէն ան-
յայտ եղաւ՝ տանտիկնոջ դռհարե-
ղաններուն արկղիկն ալ հետ տանե-
լով, բայց փութալան աշխատու-
թեամբ շաբթ օրը Գանուեցաւ Որ-
թադիւղ միջնորդ (տէլլալ) կնոջ մը
տունը, որոյ ձեռքը մտած էր Պ.

Վ. . . ի տունը, և երկուքը մէկէն
ոտորկանութեան յանձնուեցան:

Երէկ Լանկայի թաղը հինգ տա-
րեկան յոյն աղեկ մը տանը վերի յար-
կին պատահանէն փողոց կնիւղով
դուլը ջախջախեցաւ:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԵՍԶԱՄԵՐ ՈՒՄՈՒՄԻԷ

2 դեկտ. երկուշաբթի իրիկուն 49.44
3 » երեքշաբթի առաւօտ 49.47
բացուեցաւ 49.46
կէս օր

Կ. Պոլսոյ 2 դեկտ.

Սօսիթէ ժէնէրայի բաժնիք Անգլ. իր. 8.44
« ֆոխանակութեան » 5.28
Կ. Պոլսոյ Պանքային » 6.43
Գրէտի Ժէնէրայ » 11.44
Բրէտի Օսթրո-Սիւրք

Երկաթուղեաց հին 9ր. 125 1/8
Փոխ. 1863 » 347
» 1865 » 352
» 1869 » 275
» 1872 » 83
» 1873 » 262
Թրաւուէ 0ւմ. իր 4.80

ԵՐԵՎԱՆԻ ԴԵՍԵՄԲԵՐ

2 ԴԵՍԵՄԲԵՐ

Անգլ. Բօնա. 44.25
» 1865 » 87.32
» 1869 » 89.42
» 1872 » 51.25
» 1873 » —
Հինգ Գրանք » 404.45
Պիլիք » 428.40

Ա. Զ. Գ. Ա. ՅԻՆ

ՀՐԱՒՈՐ ԱՌԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՎԱՆԻՍ

Աղբային ժողովը Էրաս ունի յա-
ռաջիկայ ուրբաթ գեղեկութեան 6 իրդա-
լովի:

Ատենը պիտի բացուի ժամ 8 իշ-
6ին և դադուի 10 ին:

Հրաւիրեալ են Երեւոյի անկախ Էֆէն-
տիններն՝ իրենց ազդատիրական պար-
տականութիւնը կատարելու փու-
թալ:

2 դեկտ. 1874

Ի Պատրիարքարան հայոց

Կ. Պոլսոյ

ՊԱՏՐԻԱՐԿ Կ. ՊՈԼՍՈՅ

ՆԵՐՔԻՆ ԱՐՔԵՊԵՍԿՈՍ

ՕՐԱԿԱՐԳ

1. Ամբողջաբան նախաքննիչ դի-
ւանաց.
2. Աղթամարայ Կաթողիկոսական
խնդիր.
3. Վահ. Հայրապետին կոնդակի
խնդիր.
4. Փոփոխեալ տրամադրութիւնը

ՊԱՅՄԱՆՔ

Պատր. զանցած լրագրաց ճանու-
նակը խմբագրութեան վրայ:
Լրագրոյս վերաբերեալ նամակ
կամ որ եւ իցէ գրութիւն խմբագիր
— Տնօրէնին պիտի ուղղուի, Կ. Պո-
լսոյ, Չինիլի Խան, Մանիսի գրասեն-
եակը:
Համար. ծախքը չվճարուած նա-
մակ չընդունուիր:

Աղբ. Սահմանադրութեան.
Ատենադպր.
Ս. Պ. Պ. փաշապէս

Քաղ. ժողովը վսեմ. Արքայապետ
փաշային և Սարգիս պէյին շնորհած
3000 լիւրան իւր նպատակին՝ այն է
Երեւոյի անկախ անտուկին հին պար-
տուց վճարման դարձուելու համար,
ուրբաթ առաւ Խալիկ մէջ յատուկ
յանձնաժողով մը կազմեց վսեմ.
Սիմոն պէյ, ի նախագահութեամբ:

Յիշեալ յանձնաժողովը Երեւոյի ան-
կախ անտուկին պահանջ ընդունելը
մի տա մի կոչելով ամենն ալ դռհ
ընելու կեդրու առնելով ինքն պիտի
վճարէ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԱՆՈՆԱԳ-
ՐՈՒԹԻՒՆ
Գ.

Քաղաքական ժողովին հարցում
ըրած էինք թէ « Սահմանադրու-
թեան ո՞ր յօդուածին համաձայն կը
շարունակէ իր պաշտօնը. կ'ապակենք
որ քաղ. ժողովը պատասխանէ թէ
այդ հարցումն ընդհ. ժողովին պէտք
է ուղղել և ոչ թէ իրեն: Այն ատեն
մենք ալ պիտի ըսէինք թէ քաղ.
ժողովը դիտողութիւնը շատ իրա-
ւացի է. քանի մը անգամ ժողովոյ
ուշադրութիւնը հրաւիրած ենք ար-
դէն այդ խնդրոյն վրայ, բայց խըն-
դիրը դեռ իր օրինաւոր որոշումը
չէ ստացած, ուստի պէտք է Սահմա-
նադրութեան համաձայն կարգադրել
զայն և ոչ թէ Սահմանադրութիւնը
զոհել ստիպողականութեան կամ այլ
որ և է նկատմանց: Թէ՛ ընդհ. ժո-
ղովին մէջ խօսածներէն և թէ յօդ-
ուածիս նախընթաց դիմէն կը հաւա-
կըցուի որ մեր փափաքն այն չէր որ
քաղ. ժողովը իր պաշտօնը չշարու-
նակէ, այլ այն որ Սահմանադրու-
թեան համաձայն շարունակէ: Մենք
քաղ. ժողովը Մեծ. անդամոց հետ
տանկելք տալիք չենք ունեցած.
Քաղ. ժողովին մէջ դարձ կամ դատ
մ'ալ չենք ունեցած որ կարծուէր
թէ անոր վճիռը տեղի ունէր ընդ
զմեղ. ոչ անոր շարունակելը մեզ
ֆլուս մ'ունէր, ոչ չուծուիլը օգուտ
կրիւք չիւթումաւ միտքը միայն կըր-
նայ չհասկանալ թէ խնդիրն անձնա-
կան կամ կուսակցական չէ, այլ տա-
մանադրական սկզբունքի խնդիր է:
Բայց այս երկրին մէջ այն տանիման
սովորութիւն եղած է հասարակաց
գործի մը օգտակար կամ ֆլուս
կար լինելն անձնական կրից ազդե-
ցութեամբ կամ անձնական շահույց
ակնկալութեամբ դատելը, որ եթէ
մէկը եղէ միայն ինքը ճշմարտու-
թեան և օրինաւորութեան, ի տե-
րադարձութեան և հասարակաց օգտի
բան մը անկեղծութեամբ և անաչա-

առթեմանը պաշտպանել կամ դատապարտել, — թէ՛ խռովաբան և անհանգրաւ մարդ կը ճանչցուի և թէ՛ իր ձայնը կը լինի « ձայն բարբառոյ յանապատի » :

Երկրորդ հարցումնիս առ քաղ. ժողովն էր. « Իւր մեծագոյն մասը Սահմանադրութեան 40, 86 և 88 յօդուածին համաձայն է » : Եւ խառն ժողովին ուղղեալ հարցումնիս էր. « Սահմանադրութեան 88 յօդուածը ճշդիւ կը դորձագրուի » : Բացատրենք այդ հարցմանց նպատակը :

Նախորդ քաղ. ժողովը ընդունած և դորձագրած ներքին կանոնադրին 5 և 6 յօդուածները Սահմանադրութեան 40, 86 և 88 յօդուածոց հակառակ են : Կանոնադրին 5 յօդուածը կըսէ. « Մնացեալ (անդամայ) մեծագոյն մասով օրինաւոր ատեան կը կազմուի » : Իսկ Սահմանադրութեան 40 յօդուածը կըսէ. « Մինչև որ այս ընտրութիւնը (այսինքն հրաժարեալ անդամայ) ըլլայ, քաղ. ժողովը մէջ բարձր անդամայ մեծագոյն մասը կը վերահսկի » : Կանոնադրին 6 յօդուածը մինչև անդամ էր (3) ժողովականով որոշումներ ընել կը արամագրէ, մինչդեռ Սահմանադրութեան 86 յօդուածը բացարձէ կերպով կըսէ թէ « Առանց մեծագոյն մասի ներկայութեան Ատեան չիլնար կազմուի » : Կանոնադրին 5 և 6 յօդուածները բոլորովին հակառակ են Սահմանադրութեան 88 յօդուածին, որ կըսէ. « Խառն ժողովը մէջ քննուած որ և է խնդրոյ օրոշում տրուելու համար պէտք է որ երկուքն ալ հեծեալ միմեկին օրոշումն ըրած ըլլայ » : Արդի քաղաքական ժողովն իր նախորդին կանոնադրը մերժած չէ. (եթէ մերժած լինէր, անշուշտ այդ կարեւոր որոշումն ալ իր միւս անօրէնութեանց պէս հրատարակած կը լինէր), և լաւ ճանաչող անոր համաձայն կը վարուի : Ուստի մենք իրաւունք ունենք այդ հարցումներն ընելու, Ընդհ. ժողովին ալ պարտք էր զանոնք նկատողութեան առնելու : Բայց, ինչպէս բնական է, երբ ժամանակին դարձան չլուարձան, զեղծումներն օրինաւորութեան կարգ կանցնին :

Եթէ արդի վարչութեան անդամները, նոյնպէս և երեսփոխանը ուսմանը կը կարծեն թէ Սահմանադրութեան 40, 86 և 88 յօդուածներն ալ վերաքննուած կը համարուին Սահմանադրութեան 59 յօդուածին վերաքննութեամբ, շատ կըստիմանք որովհետեւ այդ յօդուածը վերաքննուած ատեն Ընդհ. ժողովը բնաւ բացարձէ դիտաւորութիւն չէ ունեցած անոր վերաքննութիւնը Սահմանադրութեան 86 և 88 յօդուածոց վրայ ևս տարածել : Եթէ առարկեն թէ զօրութեամբ կամ լուրջեղայն այդպէս կը հակոյժուի, այսինքն թէ 59 յօդուածին վերաքննութեան կը հետեւի ընդհանրապէս պաշտօնի մէջ դադարող անդամայ մեծագոյն մասին ներկայութիւնը փնտռել, ինչպէս որ փախադեան էֆէնտին՝ այսինքն նախորդ քաղ. ժողովը ստանադպիւրը՝ ըսած է իր Ընդհ. ժողովը 70 նիստին մէջ ներկայացուցած « Սահմանադրութեան արդէն օրագրուելով մասանց հաւաքածոյն » մէջ, դարձեալ կը սխալին, վասն զի Երեսփ. ժողովը նոյն նիստին մէջ զիւսման կողմէն պաշտօնապէս ներկայացած Սահմանադրութեան սրբաբնուած կէտերուն (որ Բ. Դրան վաւերացմանը ենթարկեցան) ցուցակին մէջ կը կարդանք. « Ընտրեալ երեսփոխանայ (և ոչ թէ աս. հասարակ ժողովականայ)

Թուոյն մեծագոյն մասը ներկայ դադարող ատեն ատեանը բնաւ, Եւ յիշատակ Ընդհ. ժողովը տանտնորդ նիստին մէջ նոյն խնդրոյն վրայ աւելի ունեցած վիճարանութիւններէն և որոշումէն անհնարին է ուրիշ բան հետեցնել, Բայց ենթադրենք պահ մը թէ 59 յօդուածին վերաքննութեան հաւանական և հնարին ըլլար հետեցնել առհասարակ պաշտօնի մէջ դադարող անդամայ մեծագոյն մասին ներկայութիւնը փնտռել, միմեկին հետեւի տակէ թէ վարչական ժողովներն իրաւունք ունին Սահմանադրութեան յօդուածներն իրենց առջամ կերպով մեկնել և դորձագրելու : Եթէ նոյն իսկ այդ ենթադրութիւնը չը հաստատուի թէ վարչութեան պարտքն այդպիսի դէպքերու մէջ անմիջապէս Երեսփ. ժողովը դիմել և անկէ խնդրել է խնդրոյ տակ եղած յօդուածին մեկնութիւնը : Որ կողմն ալ դադարող նախորդ և արդի վարչութեան այդ մասին բանաժողովը Սահմանադրութեան հակառակ է, և իրենք ժողովը այդ և այդպիսի խնդիրներու նկատմամբ բռնած անկողի և անտարբեր ընթացքը դատապարտելի թէ՛ վարչութիւն և թէ՛ Երեսփ. ժողովն ալ և առաջ իրենք պէտք է օրէնքը յարգեն և անոր դորձագրութեան նախանձանդիւր ըլլան, որպէս զի բարի օրինակ ըլլան հասարակութեան և անոր մէջ պարտաւոր իրաւանց դադարողը զարգացնելու մեծ դորձին ծառայեն քաղաքական կերպով : Երբ մէկու մը խօսքն ու դորձ իրարուն հակառակ ըլլան, իրաւունք չունենար յարգանք և պատկառանք ուղարկել ուրիշներէն. — այս շատ հին և շատ ընդհանուր ճշմարտութիւն է, զոր դեռ շատ և շատ անգամ հարկ պիտի լինի հընչեցնել ոչ միայն մեզ Հայոցս ականջին, այլ և աշխարհիս ամենէն բուսաւորեալ ազգայ մէջ : Մարդս տմեն տեղ մարդ է, այսինքն ենթադրուող մարդ է, այսինքն ենթադրուող մարդկային ակարութեանց և թերութեանց, որոցմէ մէկն ալ երկու ականջ ունենալն է. ճշմարտութիւնը կամ որ նոյն է դիտութիւնը (դարեւ փորձութեանց արդեւքը) մէկ ականջէն կը մտնէ, և ուղեղին մէջ դեռ բոյն չգրած՝ միւսէն դուրս կընէ :

Հեղեւել Բոսով
Հ. Իֆէկան

ՕՐԱԳՐԻ ԴԱՐՁԵԱԼ Ի ՄԱՐԴԱԿԻ

Կարծես թէ Օրագիր նորանոր հակառակութիւններով ամեն օր ծուղակէ ծուղակ ինչպէս ուսումնական Գրական հրատարակչին վրայ այս մեր ընդդիմախօս արամաբանը՝ իւր ճաշակին յարմար հակառակութիւններ հրատարակելու մասին միշտ իւր չընաղ տաղանդը փայլեցնելու բազմանք մ'ունի, ուսկից բնաւ չուզեր բաժնուիլ. փոյթ չէ՛, թո՛ղ նա՛ իւր պաշտօնին բնութիւնն ինչ որ է՝ դայի կատարէ, իսկ մեք նոյն իսկ իւր թերթերէն և խօսքերէն քաղելով անդամ մ'ալ ապացուցանենք թէ՛ տուած պատասխաններն աւելի իրեն դատապարտութիւն են քան թէ պաշտպանութիւն, որով ինքն ալ պահ մ'ալ իւր խօսքին թէ ինչ սարսափելի հակառակութիւններու մէջ կ'ընայ ու չգրար :

Ասկէ առաջ ըսեր էինք թէ Օրագիր իւր շինել սկսած տան համար թերեւ ներքին մտնելով, Աղթամարայ խաչատուր կաթողիկոսի օրհնութեան

անհրաժեշտ պէտք ունեցեր * , և այս պատճառաւ երկու անգամ Նորին սրբազնութեան ստորը զիմեր է դադարողով, առանց ի նկատի առնել յիշեալ կաթողիկոսական խնդրոյն մէջ իւր անցեալ քաղաքականութիւնը : Սոյն յայտնութեանէն կար խռովելով Օրագիր, կը դադարողի նախ թէ, 9—10 տարի պատահութիւն մը ձեռք ձգելու համար անհրաժեշտ պատեղէ ետեւ, հազիւ կըցեր է երեսը պնդեցնելով խաչատուր կաթողիկոսի հետ տեսակցութիւններ սկսել, այն ալ ամեն զգուշութիւն բանեցնելով որ մարդ չտեսնէ, մենք ալ երբ աշխարհի տակ և նշաւակներէն զինքը, իւր մեծ դադարներ երևան հանելով : Այս առթիւ նաեւ կըսէ թէ՛ ինչ մեղք ու ամօթ ունի Նորին Սրբազնութեան հետ ետեսակցել : Պատրիարք, Տեղապահ, ժողովական, երեսփոխան, խմբագիր, և այլն, մարդ չէ մնացած որ հետը տեսնուած չըլլան, ուստի ինքն ալ թէ և ուշ՝ 9—10 տարի ետք, ուրիշներու պէս իր տեսակցութեան իրաւունքը միայն վաւերէ : Կաթողիկոս յանձն տուած չըլլալու համար : Մենք չենք ուզեր ըսել որ Օրագիր բնականաբար այս խօսքերով 9—10 տարի կ'աշխարհէ յանձն տուած կըլլայ, այլ միայն ներկային մէջ կ'աշխարհէ մը չընելու համար խելքը վրայ եկած ըլլալուն կը զարմանանք :

Թէ որ Օրագրոյ տեսակցութիւններն անպատեղէն էին, ինչու դադարէն ընելու աշխատեցաւ, և ինչու Ընդհանուր ժողովը օրն ու արշալոյսի ժամանակ ընտրեց. դիտելով անշուշտ Օրագիր ինչ ինչ ալ օրն ու ժամանակը՝ Պատրիարքարանի մէջ իւր ներկայութեան կարեւորութիւն տեսող և զրան կատկածող ոչ ոք կը դանտէր : Ուստի Օրագրոյ մեծ թէ իսկ այլոց լուսի մէջ ըրած տեսակցութիւնները մեկմէկէ անհուն տարբերութիւն ունին :

Երկրորդ կըսէ թէ՛ աշխարհիս երեսի խմբագիրներն իսկ՝ անձամբ կամ փոխանորդաբար ծանր ամբատանութեան ներքեւ դադարող անձանց հետ անխտիր կը տեսնուին : Այս խօսքերէն Օրագիր խաչատուր կաթողիկոսի հետ տեսնուելու իրաւունք մը հանել կուզէ իրեն, քան նենք թէ այդպէս է :

Պահ մը մենք ալ ընդունինք խմբագրոյ ամբատանեալներու քով երթալու համար Օրագրոյ մէջ բերած այն առարկութիւնը. բայց Օրագիր կրնայ իրմէ զատ օրինակ մը ցոյց տալ թէ՛ խմբագիր մը 9—10 տարի՝ ամբատանեալ մը շարունակ հրատարակել թշնամանքէ ու հաւանքէ ետեւ, օր մը յանկարծ անոր քով դադար ըլլալ՝ առանց շահու ակնկալութեան : Այս օրինակը կուզէ Զինատանէն բերուի, կուզէ ճարտնէն, պիտի ընդունինք. բայց դարձեալ կը հարցնենք իրեն թէ ամբատանեալ մը շարաշար հաւանք խմբագրելը, ժամերով ինչ դորձ կրնայ ունենալ ամբատանեալն քով, և ինչ կրնայ ուղարկել անկէ : Մարդ խելք ունենալու չէ որ Օրագրոյ տեսակցութեանց անպատեղէն ըլլալուն հաստատուի :

Ասկէ զատ խաչատուր կաթողիկոս ոչ թէ զիմովմառ է, ոչ դրաշար է ոչ ալ փոխատու սեղանաւոր, ուստի Օրագիր իւր ո՞ր պիտոյքը հոգալու համար անոր քով գնաց : Բայց մեք խօսք չունենք բնաւ այն

բարեզդամ անձանց և խմբագրաց՝ որք մարդասիրական ոգով միայն այցելու թիւններ կուտան : Հետեւաբար 9—10 տարի շարունակ թշնամանք խմբագիր մը ներսդրութիւն խնդրելէ զատ ուրիշ ինչ պատճառ կրնայ ունենալ քովը երթալու . . . : Եթէ Օրագիր իւր դրամներուն վրայ զղջացած է, ու ներսդրութիւն խնդրելու համար գացած, հոգ չէ՛, թո՛ղ զայդ ըսէ, ատով դոնէ քրիստոնէական պարտք մը կատարած կըլլայ : Իսկ քանի որ Օրագիր այդ չըսեր, և ինքզինքը պաշտպանելու համար իւր մէջ բերած ձախող փաստերով փոխանակ իւր տեսակցութիւններն արգարացնելու՝ ո՛ր աւելի ծանր կերպարանք մը կուտայ անոնց, անպատեղէն չըլլալուն կատկած չի՞թողու :

Օրագիր մինչև ցարդ մեր քանի մը յօդուածներով ցուցած շատ մը բանաւոր փաստերուն և հիմնական տաղանջներուն դէմ տակաւին ամօթալի լուսութիւն մը կը պահէ. բայց որպէս թէ խօսք մը ըրած ըլլալու համար՝ ինչու « կաթողիկոս » անորոյ դորձած եւ, կըսէ, Աղթամարայ խաչատուր կաթողիկոսին համար, և տգիտաբար կը պարծի թէ ինքը միշտ « Սրբազան » տիտղոսը կուտայ անոր, իբր թէ առաջինը սխալ և նորատակաւոր, իսկ վերջինն ուղիւ և աննպատեղէն եղած ըլլալ :

Արդէն մեր յօդուածներէն յայտնի կը տեսնուի որ դիտաւորութիւննիս զխաչատուր կաթողիկոսը ոչ ճատագով է, ոչ ալ արգարացնել : Այլ քանի որ խնդիրը կաթողիկոս տիտղոսը կրնայ կրելուն և չընտրուել վրայ կը յանդի, և Օրագիր ալ իր բովանդակութեամբ անոր կը թնամ՝ օգուտ քաղել և իւր խելքով մեղ ներք խօսելու ուղի, ուստի կը վայել որ այս մասին ալ անոր բերնին չափը տանք :

Ամեն օր գիտէ թէ խաչատուր կաթողիկոս գրեթէ ուր մարտի 7-ի վեր Պոլիս կանչուած է հանդուցեալ Պոլսի Պատրիարքի օրով : Թէ և այն խնդրոյն քննութեան համար նոյն ժամանակի դադարուած կեդրեցական Համադաւար ժողովն անվաւեր վճռեց անոր կաթողիկոսութիւնը, բայց վերջերս յատենի ազգային ժողովը Պոլսի Պատրիարք և ետքէն ուրիշներ ալ յայտարարելով թէ « հապճեպով և առանց նուր քննութեան տրուած է այդ վճիռն », երեսփոխանութիւնն ալ խղճի և արգարաւորութեան պարտաւորութեամբ ուրիշ Համադաւար ժողովի մը քննութեան յանձնեց այդ խնդիրը խելքէն սրբազանի օրով, իսկ այս վերջի Համադաւար ժողովն առաջինին վճռոյն հակառակ վճիռ մը տուաւ, և օրինաւոր հրատարակեց խաչատուր կաթողիկոսի (կաթողիկոսական) օծութիւնը : Ուստի քանի որ այս վերջին վճիռը ջնջող ուրիշ մը չկայ, և քանի որ այն խնդիրը դեռ Ընդհանուր ժողովը օրակարգին մէջ կը դանտէր, իբր օրուան խնդիր, ինչպէս կը համարձակի օրագիր, իբր և կատարուած իրողութիւն, այսինքն կաթողիկոսական տիտղոսը անոր վրայէն աւելուած հրատարակել և ատով ամբատանութեան և դատապարտութեան դադարողներն իւրար շփելու կը հարցնենք Օրագրոյ թէ ազգային ո՞ր ձեռնհաս ատենին մէջ դատուելով դատապարտութեան վճիռ ստացաւ խաչատուր կաթողիկոս, որոյ վրայէն այսօր կաթողիկոսական տիտղոսը բարձուած ըլլայ : Օրագիր՝ կամ այդ դատապարտող ատենը մեզ ցուցնելու է, կամ ինչ

* Թերեւ Սողոմոնի Առակայ սու խօսքին հետեւելով « Օրհնութեամբ արգարաց բարձրանալ տուեց » : Կան. Խմբ.

քեանունի անիւն լուսնին պէշինճի
փէնճէնպիսի կիւնիւ դարարը զաթի-
սի վէրիւնճէյինտէն , տոհա աշաղը
փիւտաթիւ իթա իթմէյէ թալիպ օյան-
լարըն եւփիւ մէղքիւրաէ Տարի Շու-
րայի ասքէրիւն կէլմէլէրի :

27 Թըլըրին ասնի 1874

Պապը Սէրասքէրի

Թօլիճանէի ամբիւն իշին լուսնի
օլուպ միւնաքաւայէ գօնուլմն 900
թօլի փալաթթուրալըք քեաղըլընըն
պէճէր գըլէսի 12 զրուշա վէ 900
թօլի գօլմանլըք քեաղըլընըն պէճէր
քըլէսի 13 զրուշա թալիպիւ էօճտէ-
սինտէ օլուպ քեանունի էվլէլը լու-
սնին պէշինճի փէնճէնպիսի կիւնիւ
դարարը զաթիւսի վէրիւնճէյինտէն ,
տոհա աշաղը փիւտաթիւ իթալընա
թալիպ օյանլարըն եւփիւ մէղքիւրաէ,
Տարի Շուրայի ասքէրիւն կէլմէլէրի :

27 Թըլըրին ասնի 1874

Պապը Սէրասքէրի

Այս լրագիրը չարաթը երեք անգամ
կը հրատարակուի, երեքշաբթի, հինգշաբ-
թի եւ չարաթ օրերը : Բաժանորդագրու-
թեան տեղերն են և՛ Պօլիս Զինիլի խան
վերի շարիլ թիւ 15 Մասիսի խմբագրատուն
իսկ գաւառաց մէջ հետեւեալ հոգա-
բարձուաց սենեակները :

ԻՉՄԻՐ. Ստեփան աղա Տէալեան.
ՆԻԿԱՍԻՆԻԱ. Խոսրով էֆ. Լսկիճեան.
ՊՐՈԽԱ. Ստեփան աղա Թանկէրեան.
ԹԵՔԵՐՏԱՂ. Յովակիմ աղա Ուղու-
արդեան.
ՏՐԱՊԻՉՈՆ. Խաչատուր աղա Վրամեան
ԿԱՐԻՆ. Կարապետ աղա Կառու-
թեան.
ՎԱՆ. Կարապետ աղա Նաթանեան.
ՄՈՆԵ. Մկրտիչ աղա Փօթիկեան.
ԵԱՇ. Ս. աղա Խաչիկեան.
ՅՈՒՔՏԱՆ. Մկրտիչ աղա Աշեան.
ՀԱՆԼԵՊ. Նիկողայոս աղա Տէր Մար-
գարեան.

ԵՐԱՆԿԱՅ. Թագեոս աղա Բաղրա-
տունի.

ՍԻՎԻՆԻՍԱՐ. Կարապետ աղա Վար-
դանեան.


Ուրիշ քաղաքներէ ստորագրուիլ ու-
ղողներն այս տեղերէն մէկուն հետ կրնան
թղթակցիլ :

ԽՄԲԱԳԻՐ—ՏՆՈՐԷՆ

Կ. Ս. ԻԻԹԻՆԻԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՅ

Կ. ՊՈԼԻՍ ԶԻՆԻՆԻ ԽԱՆ



ՇԻՐՔԵԹԻ ԽԱՅՐԻԷԻ

ՇՈԳԵՆԱԽՆԵՐՈՒՆ ԵՐԹԵԻԵԿԻ ԺԱՄԵՐԸ

1874 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2 ԵՐԿՈՒՇԱՐԹԻ ՕՐԷՆ ՍԿՍԵԱԼ

ՄԻՆՁԵՆ ԴԵԿՏԵՄԲԵՐ 31

ԲՈՍՓՈՐԷՆ ԻՋՆՈՂ ՇՈԳԵՆԱԽՆԵՐԸ

Ժ. Թ. Ե.

Ե-Բ-Գ-Դ-Ե-Զ-Է-Ը-Թ-Պ-Ր

- 2 49 Ենիմահալէն Մէղարապ. Պէօյիւքտէրէ, Թարա-
պիա Ենիիւքտէյ, Սթէնեա Էմիրէյն, Բ. Հիսար, Պէ-
պէք :
- 2 45 25 Ենիմահալէն Մէղարապիւն Պէօյիւքտէրէ Թարա-
պիա, Ենիիւք. Պոյաճ. Բ. Հիսար Պէպէք. Արնալ :
- 3 15 32 Բ. Է. Ա. Գալաթէն Մէղարապ. Պէօյիւքտէրէ, Թարապ. Ենիիւք.
Սթէն. Էմիրէյն Հիսար, Պէպէք. Օրթաք :
- 4 48 Ենիմահալէն Պէօյիւքտէրէ Թարապ. Ենիիւք. Պոյաճ.
Բ. Հիսար, Պէպէք. Արն. Գուր. Օրթ. Պէշիկ :
- (Ուրթաթ օրերը ժամը 4 1/4ին)
- 5 15 20 Ենիմահալէն Մէղարապ. Պէօյիւքտէրէ, Թարապիա, Ենիիւքտէյ,
Սթէն. Էմիրէյն, Բ. Հիսար, Պէպէք. Արնալ :
- (Բացի ուրթաթէ) :
- 6 15 4 Ենիմահալէն Մէղարապ. Պէօյիւքտէրէ, Թարապ. Ենիիւք. Էմիրէյն,
Բ. Հիսար Պէպէք. Արնալ. Գուրուշ. Օրթաքտէյ :
- Պէշիկ :
- 7 6 Ենիմահալէն Պէօյիւքտէրէ Թարապ. Պէշիկ. Ենիիւք.
Էմիրէյն. Գանլըճա, Պոյաճ. Բ. Հիսար, Գանալիլի Արնա-
լաք. Պէշիկէյն Օրթաքտէյ Գուրուշեալ, Պէ-
շիկէյն, Խաչիկաւար :
- 8 45 25 Ենիմահալէն Մէղարապիւն Պէօյիւքտէրէ. Պէօյիւքտէրէ.
Թարապ. Պէշիկ. Ենիիւք. Պոյաճ. Բ. Հիսար, Պէպէք.
Արնալ. Գուրուշ. Օրթ. Պէշիկէյն :
- 9 45 22 Մէղարապիւն Պէօյիւքտէրէ Թարապ. Ենիիւք. Էմիրէյն. Բ.
Հիսար, Արնալաքտէյ, Օրթաք. Պէշիկէյն :

ԱՆԻՄԱՆ ԳԵՂԷՆ

- 2 30 4 Արնալաք. Գուրուշ. Օրթաքտէյ. Պէշիկէյն :
- 3 2 Արնալաքտէյ, Գուրուշէյն, Օրթաքտէյ, Պէշիկէյն :
- 3 30 3 Արնալ. Գուր. Օրթաքտէյ, Պէշիկ. Գալաթէյն :
- 4 5 22 Արնալ. Գուրուշ. Օրթաքտէյ. Պէշիկէյն :
- 4 30 19 Արնալ. Գուր. Օրթ. Գուրուշ. Պէշիկ. Գալաթէյն :
- 5 45 3 Արն. Գուր. Օրթաք. Պէշիկէյն, Գալաթէյն :
- 6 2 Արնալ. Գուր. Օրթ. Գուր. Պէշ. Գալ. (Բացի ուրթաթէ)
- 8 23 Արնալ. Պէշիկէյն Օրթաք. Գուր. Պէշիկէյն :

ԱՆԻՄԱՆ ԵՂԷՐ

- 2 30 21 Պէշիկէյն, Բաշ. Գանլ. Բ. Հիսար, Գանալ. Վանլէյն,
Պէշիկէյն, Պէշիկէյն, Գուրուշեալ :
- 2 30 6 Վանլէյն Պէշիկէյն, Պէշիկէյն, Գուրուշեալ, Գալաթէյն,
3 17 Պէօյիւքտէրէ, Բիւրէճալ, Պէշիկէյն, Բաշապան. Գանլ. Բ.
Հիսար, Գանալ. Վանլէյն, Պէշիկէյն, Պէշիկէյն,
Գուրուշեալ :
- 4 30 23 Պէշիկէյն, Բաշապ. Գանլըճա, Բ. Հիսար Գանալիլի, Վա-
նիք. Պէշիկէյն, Պէշիկէյն, Գուրուշ :

10 45 3 Վանլէյն, Պէշիկէյն, Պէշիկէյն, Գուրուշ :

ԱՄՍՈՒՐՁԵՆ ԵՆՈՂ, ՇՈԳԵՆԱԽՆԵՐԸ

Ե-Բ-Գ-Դ-Ե-Զ-Է-Ը-Թ-Պ-Ր

- 3 30 6 Գալաթէյն, Խաչիկաւար, Պէշիկէյն, Գուրուշեալ,
Օրթաքտէյ. Պէշիկէյն, Պէշիկէյն, Գանալիլի
Բ. Հիսար, Գանլըճա, Էմիրէյն, Ենիիւքտէյ. Պէշիկէյն,
Թարապիա, Պէօյիւքտէրէ, Ենիմահալէն :
- 4 4 Ենիիւքտէյ, Օրթաքտէյ Արնալաք. Պէպէք. Բ. Հիսար,
Էմիրէյն, Ենիիւքտէյ, Թարապիա, Պէօյիւքտէրէ, Ենիմահա-
լէն :
- 5 30 25 Պէշիկէյն, Օրթաք. Արնալ. Պէպէք. Բ. Հիսար, Էմիրէյն,
Ենիիւք. Պէշիկէյն, Թարապիա, Պէօյիւքտէրէ, Մէղարա-
պիա Ենիմահալէն :
- 6 30 23 Գալաթէյն, Խաչիկաւար, Պէշիկէյն, Գուրուշեալ,
Օրթաք. Պէշիկէյն, Վանլէյն, Արնալ :
- 8 22 Պէշիկէյն Օրթաքտէյ Արնալաքտէյ Պէպէք. Բ. Հի-
սար, Էմիրէյն, Ենիիւք. Թարապիա, Պէօյիւք. Մէղարա-
պիա Բ. Հիսար, Պոյաճ. Սթէնեա, Ենիիւք. Թարապիա,
Պէօյիւքտէրէ Ենիմահալէն : (Բացի ուրթաթէ) :
- 10 45 48 Պէպէք. Բ. Հիսար, Էմիրէյն, Ենիիւք. Թարապիա, Պէօյիւք.
Մէղարա. Բ. Է. Ա. Գալաթէյն (Ուրթաթ օրերը ժամը 40ին)
- 10 45 32 Պէշիկէյն, Օրթաք. Պէպէք. Բ. Հիսար, Էմիրէյն, Սթէն.
Ենիիւք. Թարապիա, Պէօյիւքտէրէ, Ենիմահալէն :
- 11 45 25 Սթէն. Ենիիւքտէյ, Թարապ. Պէօյիւք. Մէղարա. Ենիմահա-
լէն :
- 11 30 21 Վանլէյն, Պէպէք. Բ. Հիսար, Պոյաճ. Պէշիկէյն :

ԱՆԻՄԱՆ ԳԵՂԷՆ

- 3 45 49 Պէշիկէյն, Արնալաքտէյ :
- 5 45 2 Արնալաք. (Բացի ուրթաթէ) :
- 9 15 3 Գալաթէյն. Պէշիկ. Օրթաք. Գուրուշ. Արնալ. Վանլէյն :
- 10 24 Պէշիկէյն, Օրթաք. Գուրուշ. Արնալ :
- 10 30 2 Պէշիկէյն, Օրթաքտէյ, Գուրուշ. Արնալաքտէյ :
- 11 5 4 Գալաթէյն, Պէշիկէյն, Օրթաքտէյ, Գուրուշ, Արնա-
լաքտէյ :
- 11 25 5 Պէշիկէյն, Օրթաք. Գուրուշ. Արնալաքտէյ :
- 11 45 6 Պէշիկէյն, Օրթաք. Գուր. Արնալ :
- 12 2 Պէշիկ. Օրթաք. Արնալ :

ԱՆԻՄԱՆ ԵՂԷՐ

- 4 30 3 Պէշիկէյն, Գուրուշ. Պէշիկէյն, Վանլէյն, Արնալ :
- 9 45 20 Գուրուշ. Պէշիկէյն, Վանլէյն, Բ. Հիսար, Գանլըճա,
Բաշապ. Պէշիկէյն, Պէօյիւքտէրէ, Պէօյիւքտէրէ :
- 10 35 17 Գուրուշ. Պէշիկէյն, Վանլէյն. Բ. Հիսար, Գանլ. Բաշ,
Պէշիկէյն, Պէօյիւք :
- 11 5 23 Գուրուշ. Պէշիկէյն, Վանլէյն, Վանլէյն, Գանալ. Բ. Հի-
սար, Գանլըճա, Բաշապան, Պէշիկէյն, Պէշիկէյն :
- 11 40 22 Գալաթէյն, Գուրուշ, Պէշիկէյն, Վանլէյն, Վանլի :

Ծան.— Ամեն ուրթաթ տաւած ժամ 5ին կամուրջէն աւելի
չողերու մը պիտի ելնէ եւ Խաչիկաւարէն մինչեւ Պէշիկէյն ամեն
նաւամասոյցները հանդիպելէ ետեւ Պէօյիւքտէրէ պիտի երթայ
եւ ժամ 8 3/4ին Պէօյիւքտէրէն մեկնելով եւ Նոյն նաւամա-
սոյցները հանդիպելով կամուրջը պիտի դառնայ :


ԶԳՈՒՇԱՑԷՔ ԳՈՂԵՐԷՆ

Ամենէն փառաբանող գողերը՝ պատուաւոր վաճառականաց ստո-
րագրութիւնն ու նշանը խորհարարներն են : Շատ անգամ գէշ
ու աստղաթիւն փառաբանող բաղադրութիւններ կը ծախեն հնա-
րօշներուն նշաններովը եւ անոնց բուն վաճառքին անունն ու համա-
րումը կը կտրեն :

Ռօժէի մաքրողական փաշին, որ փարիզի բժշկական ակադեմիա-
յին հաւանութիւնն ստացած է, շատ վաճառուելուն պատճառաւ ու-
մենէն շատ կը խորհարարի :

Ուստի գնորդները չխաբուելու համար շի-
շերուն պատեանը փոփոխել հարկ եղաւ :

Այսուհետեւ բուն Ռօժէի փաշի պէտք է
ճանչել այն շիշերը՝ որոց ծայրերը՝ ներկայ կը-
նիքը կը գտնուի չորս դունով :



NORTH BRITISH AND
MERCANTILE
INSURANCE COMPANY

ՆՈՐԹ ԵՄ ԲԵՐԻՇ ԵՆՏ ՄԵՐԿԵՆԹԻՆՍԻ

Լանքայնի և Եւրոպայի ապահովութեան

ընկերութեան Անգլ. Լը.

Բաժանորդագրեալ գումար շուրջ 2,000,000

վճարեալ գումար շուրջ 250,000

Պահեստի գումար շուրջ

հի ճիւղէն դոյացեալ 596,000—846,000

1872ին հրդեհի դուռ հասցիլը 794,000

Ստորագրեալը իրենց բաղմունիւ յաճախորդաց և այլ քաղաքիւ ընդհանուր
հասարակութեան կը ծառայեն որ իրենց վերջինեւ կրկն ընկերութեանց մի-
այեալ դործակարար ընտրուած ըլլալով, այնպիսի դրոշմեան մը մէջ կը գտնուին,
որով հրդեհի դէմ ապահովութեան մեծ դիւրութիւններ կը մատուցեն :

Ապահովութեանց կարգադրութիւնները կը խորհարարներու կրկն ընկերութեանց
մէջ համաձայնութեամբ ընտրուած մը, և այսպիսի ապահովութեան և դիւրութեան
աւելնալով ընկերութեան ալ կրնայ աւելի մեծադուստր ապահովութիւն բաժնոյ-
ներու ինքզինքը ներկայացունել :

Գրեթէ ամեն կարգի վտանգաւոր ապահովութիւնը կրնան ընդունել ինչպէս
Բերայի Ղալաթիլի և Պոլսոյ մէջ, նոյնպէս մատակարար քաղաքները զիւրեքը և գա-
ւառները :

Գիններուն և աւելի մանրամասն տեղեկութեանց համար պէտք է դիմել Մի-
ացեալ ընկերութեանց գրասենեակը Ղալաթիլի Բերլինգ քաղաքի մօտ Նլապանի
խան թիւ 5 :

NORTHERN

ASSURANCE COMPANY

ՆՈՐԹ ԵՄ ԲԵՐԻՇ

Լանքայնի և Եւրոպայի ապահովութեան

ընկերութեան Անգլ. Լը.

Բաժանորդագրեալ գումար շուրջ 2,000,000

վճարեալ գումար շուրջ 100,000

Պահեստի գումար շուրջ

հի ճիւղէն դոյացեալ 250,000—550,00

1872ին հրդեհի դուռ հասցիլը 270,000

Ստորագրեալը իրենց բաղմունիւ յաճախորդաց և այլ քաղաքիւ ընդհանուր
հասարակութեան կը ծառայեն որ իրենց վերջինեւ կրկն ընկերութեանց մի-
այեալ դործակարար ընտրուած ըլլալով, այնպիսի դրոշմեան մը մէջ կը գտնուին,
որով հրդեհի դէմ ապահովութեան մեծ դիւրութիւններ կը մատուցեն :

Ապահովութեանց կարգադրութիւնները կը խորհարարներու կրկն ընկերութեանց
մէջ համաձայնութեամբ ընտրուած մը, և այսպիսի ապահովութեան և դիւրութեան
աւելնալով ընկերութեան ալ կրնայ աւելի մեծադուստր ապահովութիւն բաժնոյ-
ներու ինքզինքը ներկայացունել :

Գրեթէ ամեն կարգի վտանգաւոր ապահովութիւնը կրնան ընդունել ինչպէս
Բերայի Ղալաթիլի և Պոլսոյ մէջ, նոյնպէս մատակարար քաղաքները զիւրեքը և գա-
ւառները :

Գիններուն և աւելի մանրամասն տեղեկութեանց համար պէտք է դիմել Մի-
ացեալ ընկերութեանց գրասենեակը Ղալաթիլի Բերլինգ քաղաքի մօտ Նլապանի
խան թիւ 5 :

Վ. Ռ. ՍՈՒՍԵՆ